«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Առարկան՝Հայոց լեզու , գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Լուսինե Հարությունյան

Ուսումնական հաստատություն՝«Խ.Աբովյանի անվան թիվ 84հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2022

Բովանդակություն

Հետազոտական աշխատանք 3
Ներածություն 4
Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ 5
Ինչի՞ մասին ես ուզում սովորել 5
Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը 6
Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին 10
Եզրակացություն 18
Օգտագործված գրականության ցանկ 19

Հետազոտական աշխատանք

Թեմա- Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Ինչի՞ մասին ես ուզում սովորել- Ի՞նչ է իրենից ներկայացնում ընտանիք հասկացողությունը, որո՞նք են ընտանեկան կոնֆլիկտների առաջացման հիմքերը:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը- Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա:Միջանձնային փոխհարաբերությունները դառնում են ավելի կոնֆլիկտային: Ընտանեկան կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, ինչի արդյունքում կարող են զարգանալ հոգեբանական խնդիրներ, վարքային խանգարումներ:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին- Ընտանեկան կոնֆլիկտները մեծամասամբ լինում են ընտանիքի անդամների արժեքային սկզբունքների տարբերությունների պատճառով, մյուս կողմից արժեքային կողմնորոշումները իրենց բնույթով դինամիկ են, և հաճախ նրանց առաջնայնությունը պայմանավորված է լինում տարիքային առանձնահատկություններով և նախասիրություններով: Ընտանեկան կյանքը այն միջավայրն է, որտեղ դրսևորվում են սերունդների կոնֆլիկտները, որոնք կրում են սոցիալական բնույթ:

Խաչվող հասկացությունները՝

- Ժամանակ և տարածություն
- Բարոյականություն և արժեհամակարգ

Հետազոտության թեմային առնչվող բնագավառները՝

1. Հոգեբանություն
2. Փիլիսոփայություն
3. Կոնֆլիկտոլոգիա

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Յուրաքանչյուր սոցիալական ինստիտուտ գոյություն ունի իր կատարած գործառույթների շնորհիվ: Որպես սոցիալական օրգանիզմ՝ ընտանիքը ևս ունի մի շարք գործառույթներ, որոնք ընդհանրական են և համամարդկային բնույթ ունեն: Սակայն, այս ամենով հանդերձ, ունեն նաև անհատական յուրահատկություններ: Ընտանիքը, որպես սոցիալական ինստիտուտ, ունի մի քանի տեսանկյուն: Բացի մշակութային և պատմական տեսանկյուններից ՝ մենք չպետք է արհամարհենք նաև էթնոսոցիալականը: Եվ մինչ ընտանիքի գործառույթներին անցնելը՝ չափազանց կարևոր է ընտանիքը դիտարկել որպես սոցիալական ինստիտուտ:

«Ընտանիք' հասկացության հստակ բովանդակությունը կախված է պատմական և մշակութային համատեքստից: Ի սկզբանե, ընտանիք հասկացությունը ենթադրում էր՝ որպես մեկ ամբողջություն գործող ընտանեկան կենցաղ, որը ներառում էր նաև նույն տանիքի տակ ապրող և միևնույն անձին ենթարկվող բոլոր մարդկանց: Իր հիմքում ընտանիքը հանդիսանում է համայնք, որը ենթադրում է իր անդամների տարրական կարիքների բավարարում և պաշտպանություն, կենսա-սոցիալական համակարգ, սովից և հետզարգացումից պաշտպանող, որի սահմաններում էլ ձևավորել է մարդկային ցեղը: Նորմատիվ ընտանիքը ժամանակակից հասարակությունում նկարագրվել է որպես սոցիալ-տնտեսական միավոր, որը գոյություն ուներ հետերոսեքսուալ զույգերի միջև:

Թեմայի հետազոտության նպատակը: Հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել ընտանիքի հոգեբանությունը և կոնֆլիկտների առաջացման պատճառները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ են հանդիսացել բարոյական արժեքները, իսկ առարկան՝ ընտանեկան դաստիարակության կարևորության ուսումնասիրումը:

Հետազոտության կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Ընտանիքը հանդիսանում է ոչ միայն սոցիալական ինստիտուտ, այլև փոքր սոցիալական խումբ: «Սոցիալական ինստիտուտ» հասկացությունը ներառում է ընդհանուր հետաքրքրություններով միավորված անհատների խմբավորում, ովքեր իրենց գործունեության ժամանակ հետևում էին կոնկրետ ծրագրերի, և բաց է հասարակության կողմից վերահսկման համար:

Յուրաքանչյուր սոցիալական ինստիտուտ ունի իր սեփական ստատուսների հիերարխիան և զբաղեցրած ստատուսներից ելնելով՝ ապահովում է սոցիալական դերերի իրականացումը: Բացի այդ՝ յուրաքանչյուր սոցիալական ինստիտուտ հետևում է որոշակի վարքային չափանիշների, որն այսպիսի ինստիտուտին տալիս է կանխատեսելի բնույթ:

Ինչի՞ մասին ես ուզում սովորել

«Համաձայն համընդհանուր սահմանման, «սոցիալական ինստիտուտ» հասկացությունը նշանակում է ֆորմալ և ոչ ֆորմալ կանոնների, սկզբունքների, դիրքորոշումների կայուն համալիր, որոնց միջոցով հասարակությունը կարգավորում և վերահսկում է մարդկանց գործունեությունը՝ մարդկային կյանքի առավել կարևոր ոլորտներում: Այն հստակ իրավիճակում որոշակի անձանց կողմից իրականացվող նպատակահարմար վարքային չափանիշների շարք է: Իսկ վարքային չափանիշները մտնում են դերերի և ստատուսների համակարգի մեջ»[1]:

Յուրաքանչյուր գործող սոցիալական ինստիտուտ (ընտանիք, տնտեսություն, քաղաքականություն, կրթություն և կրոն) բավարարում է հասարակության կոնկրետ կարիքները, և հենց դրանով էլ պայմանավորված է նրա կենսագործունեությունը: Այն պահից, երբ որոշակի սոցիալական ինստիտուտ դադարում է բավարարել սացիալական աշխարհի կարիքները, նրա գործունեությունը կարող է ընդհատվել: Յուրաքանչյուր հասարակություն կազմված է մի շարք սոցիալական ինստիտուտներից: Այդ ինստիտուտներն ունեն իրենց խնդիրները, նպատակներն ու ֆունկցիաները:

Միաժամանակ, յուրաքանչյուր սոցիալական ինստիտուտ արտացոլում է հասարակությունում արժեքների և նորմատիվների սանդղակները: Իր խնդիրներն ու գործառույթներն ունեցող ընտանիքը, որպես արժեքավոր սոցիալական օրգանիզմ, չի կարող դիտարկվել մշակութային և էթնիկական համատեքստից դուրս: Այս ինստիտուտի շնորհիվ է իրականացվում ընտանիքի անդամների վերարտադրողականությունը, հնարավոր է դառնում միջսերնդային ինստիտուտի

[1] Дружинин В. Н., Психология семьи. Екатеринбург: Деловая книга, 2000, էջ 23

անընդհատությունը: Սոցիալական ինստիտուտ հանդիսացող ընտանիքը հետևում է որոշակի արժեքային սանդղակի: Այդ սանդղակի կենսունակությունը, նրա կայունությունը պահպանվում են սոցիալականացման գործընթացի, նորմերի, կանոնների, ավանդույթների, վարքաձևերի միջսերնդային փոխանցման շնորհիվ: Հասարակության մշակույթը ձևավորվում է ընտանիքում:

Սոցիալական ինստիտուտ հանդիսացող ընտանիքը համարվում է հասուն, եթե առաջնորդվում է ընտանիքի անդամների նկատմամբ պատասխանատվությամբ: Ընտանիքի սոցիալ-հոգեբանական հասունությունը որոշվում է ամուսինների մոտ միմյանց և երեխաների նկատմամբ պատասխանատվության առկայությամբ: Երեխաների լույս աշխարհ գալու փաստը դեռ չի խոսում ընատնիքի լիարժեք լինելու մասին: Ընտանիքի ամբողջականության կամ որպես մեկ ամբողջական և արժեքավոր ինստիտուտի վերաբերյալ սոցիալ-հոգեբանական մոտեցումը ենթադրում է ընտանիքի անդամների մոտ միմյանց նկատմամբ պատասխանատվության առկայություն:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը

Ընտանիքի արժեքային համակարգում գերակայում է հենց պատասխանատվության զգացումը: Քանի որ պատասխանատվության առկայության դեպքում մնացյալ բոլոր արժեքները բխում են նրանից: Ընտանիքը գնահատվում է որպես սոցիալական ինստիտուտ, որն ապահովում է սերունդների վերարտադրողականությունը և ժառանգականությունը, հանդիսանում է բարոյական և վարքային մշակութային ստանդարտների կրող: Սակայն այս բոլոր ստանդարտները իրականում ծագում են հիմնական արժեքից: Նույնիսկ առօրյա փորձի մակարդակում հասարակությունը ընտանիքի վերաբերյալ դատում է հարգանքի հոգեբանական մակարդակից: Այս բոլոր իրական արժեքները վերածվում են խաբկանքի, եթե չեն ծագում պատասխանատվությունից:

Ավելի հստակ՝ յուրաքանչյուր հասարակություն կարող է գոյատևել և զարգանալ նորանոր սոցիալական ինստիտուտների ձևավորման շնորհիվ: Սոցիալական ինստիտուտները ցանկացած հասարակության բաղկացուցիչ մասն են: Այս օրինաչափությունը վերաբերում է նաև նախնադարյան հասարակությանը, որը նույնպես բաժանվում էր որոշակի սոցիալական ինստիտուտների: Յուրաքանչյուր սոցիալական ինստիտուտ ունի գործունեության իր դաշտը, հետևաբար յուրաքանչյուր սոցիալական ինստիտուտ անհրաժեշտ է այնքանով, որքանով ունակ է բավարարել հասարակության կարիքները: Բոլոր այս կարիքները

կրում են ֆունդամենտալ բնույթ, դրանք կենսական նշանակություն ունեն և սոցիալապես արժեքավոր են: [2]

Յուրաքանչյուր սոցիալական ինստիտուտ իր սահմանափակ գործառույթների հետ միասին տիրապետում է նաև վերահսկման գործառույթին և կարգապահությանը: Ի՞նչ է նշանակում «սոցիալական կարգապահություն» հասկացությունը: Սոցիալական հոգեբանության համատեքստում սոցիալական կարգապահությունը նշանակում է կենսագործունեության որոշակի ստանդարտ, որի դեպքում առավելագույն կերպով ապահովվում է անհատի անվտանգությունն ու սոցիալական կայունությունը: Սոցիալական կարգապահությունը նշանակում է նաև հասարակության անդամների վարքի կանխատեսման հնարավորության ձևավորում: «Սովորաբար, յուրաքանչյուր ժամանակակից հասարակությունում գոյություն ունեն հիմնական սոցիալական ինստիտուտներ՝ ընտանիք, տնտեսություն, քաղաքականություն, կրթություն և կրոն: Նրանցից յուրաքանչյուրը մասնագիտացված է լուծելու հասարակությունան մեջ գոյության և նորմալ գործունեության հետ կապված կարևոր խնդիրները»:

Ըստ էության, ընտանիքը, որպես սոցիալական ինստիտուտ, ինքնին փոքրիկ հասարակություն է, ընտանիքը հասարակության «ներկայացուցիչն» է, ինչպես իր վերարտադրողական գործառույթի, այնպես էլ իր առաջնային սոցիալականացման գործառույթի շնորհիվ: Ընտանիքը ոչ միայն վերարտադրում է հասարակությունը, այն ձևավորում է նաև միջսերնդային կապերը, կամ կարելի է ասել ապահովում է միջսենդային սոցիալականացումը: Ընտանիքը կարելի է սահմանել որպես առաջնային սոցիալական զարգացման միջավայր, որն ունի սոցիալական, տնտեսական և սոցիալ-հոգեբանական կապերի բարդ համակարգ:

Հասարակության վարքային նորմերը ընտանիքի վարքային նորմերն են: Երեխային արժեքային համակարգի փոխանցումը սկսվում է ծննդյան պահից, սակայն այդ նորմերի և արժեքների ամենախոր մեխանիզմը նույնականացումն է: Բարոյական և մշակութային արժեքները անիմաստ են, եթե չեն յուրացվում նույնականացման շնորհիվ: Այս նորմերը պետք է երեխայի սեփականությունը դառնան, սակայն նրանք այդպիսին են դառնում միայն նույնականացման իրական օբյեկտի առկայության դեպքում: Ծնողն ինքը պետք է վերարտադրի այդ նորմերն ու արժեքները ոչ միայն խոսքով, այլև գործով: Այստեղ մենք պետք է ցույց տանք չափազանց կարևոր մի խնդիր. եթե ընդհանուր առմամբ նորմերն ու արժեքները բոլոր ընտանիքներում նույնն են, ապա հասարակությունում ինչու են մշտապես

[2] Жедунова Л. Г., Можаровская И. А., Посысоев Н. Н., Юрасова Е. Н., Основы псхологии семьи и семейного консультирования. Изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2004.

հանդես գալիս այլ, հաճախ նույնիսկ դեստրուկտիվ /ապակառուցողական/ վարքաձևեր: Այս խնդրի լուծումը մենք տեսնում ենք վաղ սոցիալականացման մեջ, որ ծնողները ընտանիքում հաճախ քարոզում են երկակի ստանդարտներով քաղաքականություն:

Մի կողմից, նրանք փորձում են երեխաներին ներշնչել վարքային և բարոյական նորմեր, մյուս կողմից՝ հենց իրենք չեն հետևում այդ նորմերին: Եվ այս նորմերը ձեռք են բերում «հարսանեկան գեներալի» ստատուս, ում ներկայությունը պարտադիր է, սակայն ընդհանրապես ոչ մի դեր չի խաղում: Այս նորմերը վերածվում են ինչ-որ քրքրված սոցիալական դիմակի, որը կարելի է և պետք է հագնել միայն որոշակի իրավիճակում: Ընդհանուր առմամբ, իհարկե հասարակությունում գերակայում են այն վարքային նորմերը, որոնք կենսագործունեության ընթացքում առավելագույն կերպով ապահովում են մարդու առավել շահավետ դիրքի գրավումը: Այդուհանդերձ, հարցի բարոյական կողմը նույն «հարսանեկան գեներալն» է: Այդ գեներալի ամբողջ նշանակությունը իր անձի մեջ չէ, այլ այն ձևի, որը նա կրում է: Ընտանիքում նույնպես հաճախ սովորեցնում են ձևը՝ անտեսելով բովանդակությունը: Այդ պատճառով, մենք կարծում ենք, որ ընտանիքում իրականացվում է երեխայի ոչ թե առաջնային, այլ հիմնական սոցիալականացումը:

Դեռ հոգեդինամիկական մոտեցման ժամանակ աքսիոմա է համարվում այն միտքը, որ մենք սովորում ենք ապրել մեր կյանքի առաջին տարիների ընթացքում: Ընտանիքը երեխային սովորեցնում է ապրել, սովորեցնում է վարքային նորմերը և հույզերն արտահայտելու ձևերը, շրջակա աշխարհին հարմարվելը: Երեխայի ճակատագիրը մեծամասամբ ձևավորվում է ընտանեկան սոցիալականացման շնորհիվ: Սեքսուալ հարաբերությունների յուրահատկությունը նույնպես կախված է մշակույթից, որտեղ գործում է ընտանիքը: Ընտանիքը հանդիսանում է մշակույթի կրողը և արարողը:

Հասարակության ձևավորումը, վարքագծերի նորմերի տիրապետումը, այս գործընթացներն ընթանում են ընտանիքում, այդ իսկ պատճառով ընտանիքը իրենից ներկայացնում է ամենակարևոր սոցիալականացման ինստիտուտը: Ընտանեկան սոցիալականացման ընթացքում ձևավորվում է երեխայի հոգեբանական առանձնահատկությունը, նրա ինքնագնահատականը, նրա կյանքի սցենարը: Անբարենպաստ հանգամանքների դեպքում, պրոբլեմային ընտանիքներում երեխան ադեկվատ ինքնագնահատական ձևավորելու համար քիչ հնարավորություններ ունի: Հետագայում ընտանիքի սահմաններից հասարակություն է դուրս գալիս մի մարդ, ում մոտ ընտանիքը ձևավորել է ցածր ինքնագնահատական, և հնարավոր է անգիտակցաբար ծրագրավորել նրա ճակատագիրը: Այդ անձը դառնում է

հասարակության անդամ և շուտով գտնում է իր իսկ նմաններին: Ինքնին ընտանիքը որպես սոցիալականացման ինստիտուտ ունի բոլոր հնարավորությունները հասարակության ճակատագիրը ձևավորելու համար:

Անձի սոցիալականացման գործընթացում ընտանիքն ունի մեծ առավելություններ՝ սիրո և քնքշության, հոգատարության և հարգանքի, հասկացման և աջակցության հոգեբանական մթնոլորտի շնորհիվ: Հսկայական նշանակություն ունեն երեխաների և ծնողների միջև առկա ֆիզիկական, հուզական և սոցիալ-հոգեբանական կապերը»:

Ընտանիքն առանձին կամ ինքնավար սոցիալական միավոր չէ, այն հասարակության բաղկացուցիչ մասն է: Մյուս կողմից, ընտանիքը միջնորդ է ապագա անձի և հասարակության միջև հարաբերությունների ձևավորման գործընթացում: Սակայն, ինչպես յուրաքանչյուր սոցիալական ինստիտուտ, ընտանիքը ևս ունի որոշակի աստիճանի անկախություն և ինքնավարություն: Յուրաքանչյուր ընտանիք պետք է ունենա իր յուրահատկությունը, իր աշխարհայացքը, իր արժեքները: Դրա հետ մեկտեղ յուրաքանչյուր ընտանիք այսպես թե այնպես հանդիսանում է սոցիալական արժեքների կրող: Հասարակությունը և ընտանիքը փոխներգործող ինստիտուտներ են:

Ընտանիքի գործառույթների սոցիալ-հոգեբանական վերլուծությունը չի կարող հաշվի չառնել ընտանիքի անդամների միջև առկա փոխհարաբերությունների մակարդակն ու բնույթը:[3] Այդ փոխհարաբերությունների բնույթն արտացոլում է ընտանիքի սոցիալական արժեքները: Ընտանիքի անդամների փոխհարաբերությունների մեջ ներթափանցում են տարաբնույթ այլ գործոններ՝ ավանդույթները, միջսերնդային փոխհարաբերությունները, ազգականների կողմից ընտանիքի գործերին միջամտությունը: Այդ իսկ պատճառով ժամանակակից ընտանիքի վերլուծության համատեքստում կարելի է առանձնացնել ծագող ինստիտուցիոնալ ճգնաժամը: Ժամանակակից աշխարհում ընտանեկան ճգնաժամը որպես սոցիալ-ավանդական ինստիտուտ, ձեռք է բերում իր գծերն ու առանձնահատկությունները: Այդ ճգնաժամի յուրահատկություններից մեկն էլ այն է, որ ընտանիքի որոշ գործառույթներ ընտանեկան կյանքում դադարել են գերակայել: Օրինակ՝ ժամանակակից աշխարհում ընտանիքի վերարտադրողական գործառույթը հանգեցնում է ժողովրդագրական ճգնաժամի: Շատ ընտանիքներ իրենց համար կարևոր և անհրաժեշտ չեն համարում երեխաներ ունենալը: Ընտանիքների մեծամասնությունը բավարարվում է մեկ երեխայով: Ժամանակակից ընտանիքը

[3] Шибутани. Чувства и роли. В книге: Райгородский Д.Я. Психология и психоанализ любви. Самара: Издательский Дом БАХРАХ-М. 2000.

պարտադիր չի համարում նորմերին և ավանդույթներին հետևելը: Տարեցտարի նվազում է ամուսնությունների օրինական գրանցումների քանակը: Նույնիսկ Հայաստանում, որտեղ ընտանեկան ավանդույթները նախկինի պես ուժեղ են, նույնպես նկատվում են ոչ օրինական ամուսնության դեպքեր, որն էլ ազգային ավանդական գիտակցության մեջ ընկալվում է խիստ բացասաբար: Սակայն ընտանիքը դինամիկ սոցիալական գոյացություն է, որն ունի ինչպես անցյալ, այնպես էլ ներկա և ապագա: Ընտանեկան հարաբերությունների ձևերը միանշանակ պետք է փոփոխվեն: Իսկ դա նշանակում է, որ մարդկանց աշխարհայացքում նվազում են ավանդական դիրքորոշումները: Իսկ դա նշանակում է, որ ինչքան նկատելի է դառնում ընտանիքի ավանդական մոտեցումների խեղումը, այդքան ավելի հստակ է արտահայտվում ինստիտուցիոնալ ճգնաժամը:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին

Ինչպիսին են ընտանիքի ինստիտուցիոնալ ճգնաժամի նշանները: Առաջին հերթին, գրանցվող օրինական ամուսնությունների թվի նվազումը, երկրորդը՝ վերարտադրողականության մակարդակի նվազումը, քաղաքացիական ամուսնությունների թվի աճը, որը պայմանավորում են հիմնականում ամուսնությունը չօրինականացնող և երեխա չունեցող ընտանիքները: Սակայն ամենից էական դրսևորումը, որը ծնում է վերոնշյալը, պաշտոնական և քաղաքացիական ամուսնություն հաստատող երիտասարդների աշխարհայացքի փոփոխությունն է: Ժամանակակից ընտանիքներում այժմ գերակայում են այլ կարիքներ:

Առաջին հերթին առաջնային մակարդակում կարևորվում է անհատական մոտիվացիան, սեռական նախասիրությունների ազատությունը, ամուսինների հարաբերական ազատությունը, դերային հիերարխիայի մերժումը: Ընտանիքը ընկալվում է որպես ինստիտուտ, որտեղ անձնային նախասիրությունները սկսում են ճնշել ընտանեկան կյանքի վերաբերյալ ավանդական պատկերացումներին: Դերային պատկերացումներն ու կանոնակարգերը ևս կրում են նշանակալի փոփոխություններ:

Երիտասարդ ընտանիքների աշխարհայացքում տեղի ունեցող փոփոխություններն ամբողջովին օրինաչափ գործընթացներ են, որոնք բերում են ոչ միայն ընտանիքի տիպի փոփոխության, այլև ընտանեկան նոր հարաբերությունների ծագմանը: Այսպես են կարծում ռուս հետազոտողներ Լ.Գ. Ժեդունովան և Ի. Ա. Մոժարովսկայան: Ընտանիքի հոգեբանության հետազոտողների մեծամասնությունը, մասնավորապես՝ Լ.Գ. Ժեդունովան, Ի.Ա. Մոժարովսկայան, Ն.Ն. Պոսիսոևը, Ե.Ն. Յուրասովան, Դ. Ֆրիմենը, Ա. Յա. Վարգան, Կ. Ռոջերսը, Ն. Պեզեշկյանը, Օ.Ա.

Կարաբանովան, Է.Գ. Էյդեմիլլերը, Վ. Յու. Սլաբինսկին և այլք առանձնացնում են նրա հետևյալ հիմնական գործառույթները.

♦ գոյատևման ապահովում. ընտանիքի պաշտպանությունն արտաքին վնասակար գործոններից,

♦ ընտանիքի անդամների միմյանց մասին հոգալը,

♦ երեխաների դաստիարակությունը,

♦ ֆիզիկական, հուզական, սոցիալական և տնտեսական նախապայմանների ստեղծումը՝ ընտանիքի անդամների անհատական զարգացման համար,

♦ միմյանց միջև նեղ հուզական կապի պահպանումը,

♦ միմյանց վարքի սոցիալական վերահսկողության իրականացումը:

Լ.Գ. Ժեդունովան և Ի.Ա. Մոժարովսկայան այս շարքին գումարում են նաև պահպանումը, զարգացումը և հետագա սերունդներին հասարակության արժեքների և ավանդույթների փոխանցումը, սոցիալ-դաստիարակչական պոտենցիալի ուղղորդումը և իրացումը, սեքսուալ-էրոտիկ կարիքների բավարարումը, մայրական կամ հայրական անհատական կարիքների բավարարումը, երեխաների հետ կապը, նրանց դաստիարակությունը, երեխաների առումով ինքնառեալիզացիան, հոգեբանական հարմարավետության պահանջմունքի բավարարումը և հուզական աջակցությունը, անվտանգության զգացողությունը, սեփական ես-ի կարևորությունն ու արժևորումը, հուզական ջերմությունն ու սիրո զգացումը, ընտանեկան համատեղ կենցաղի կազմակերպումը, ընտանիքում աշխատանքի բաժանումը, փոխօգնությունը:

Նույնիսկ ժամանակակից «ազատ ընտանիքը» ենթարկվում է ավանդական արժեքներին: Որքան էլ տարօրինակ է, հենց ընտանիքի ավանդական մոտեցումներն են թույլ տալիս պահպանել նրա կայունությունը ճգնաժամային ժամանակահատվածներում: Սոցիալական հոգեբաններն առանձնացնում են նաև ընտանիքի ֆելիցիտոլոգիական (երջանկության) գործառույթը: Այլ կերպ ասած՝ այն, թե ինչպես են տարբեր ընտանիքները հասկանում երջանկությունը: Ոմանց համար դա փոխըմբռնումն ու սերն է, մյուսների համար՝ նյութական հարստությունը, երրորդի համար՝ ընտանեկան երջանկությունը, սեռական և սոցիալական բարեկոցությունը[4]:

Ըստ էության՝ այս գործառույթը կարելի է սահմանել որպես ընտանիքի գեդոնիստիկ գործառույթ: Սակայն ընտանեկան հոգեբանության մեջ նույնպես այս

[4] Hicks M.W. Platt L.M., Marital happiness and stability: A review of the research in the sixties //A Desade of Family Research and Action, 1960-69. Ed. by C.B.Broderick. Minneapolis, 1971, p. 59-78. KoftaM.Samokontrolaiemocje-Warszawa:PWN. 1979.- 376s. Lewis R.A., Spanier, G.B. Theorizing about the quality and stability of marriage // Contemporary theories about the Family/Ed, by W.R. Burr and others.-vol.l, New Yoric, 1979. P. 268-294.

գործառույթը դիտարկվում է առանձին, այնուամենայնիվ, ինչպես մենք ենք կարծում, այն նույն վերոհիշյալ ֆելոցինոլոգիական գործառույթն է: Գեդոնիստիկ գործառույթը կապված է ֆիզիկական և հոգեբանական կարիքների բավարարման հետ, իսկ դա նշանակում է, որ այս գործառույթն ընդհանուր առմամբ ապահովում է երջանկության ապրումը: Ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել ընտանիքի հետևյալ գործառույթները՝ վերարտադրողական, դաստիարակչական, տնտեսական, սոցիալական վերահսկողության, դերային, հոգեկան զարգացման, հուզական, սեքսուալ գեդոնիստիկ: Բոլոր թվարկված գործառույթներն ամենից առաջ ցույց են տալիս, որ ընտանիքը հանդիսանում է ինչպես սոցիալականացման ինստիտուտ, այնպես էլ փոքր խումբ, որտեղ ստեղծված են բոլոր պայմաններն անձի ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական և հոգևոր զարգացման համար: Գործառույթների բազմազանությամբ ընտանիքը հանդիսանում է փոքր սոցիալական խումբ, որը բավարարում է ինչպես անձի անհատական կարիքները, այնպես էլ հասարակության սոցիալական կարիքները: Անկախ ընտանիքի գործառույթների բազմազանությունից, նրանք ոչ բոլորն են միևնույն չափ կարևոր և արժեքավոր: Յուրաքանչյուր ընտանիքում գոյություն ունեն առաջնային և երկրորդական, հիմնական և լրացուցիչ գործառույթներ:

Գերակայող գործառույթը որոշվում է ընտանիքի արժեքային սանդղակով, այսինքն՝ թե որ գործառույթն է ավելի արժեքավոր համարվում: Սա չի նշանակում, որ ընտանիքի բոլոր անդամները կիսում և ընդունում են գերակայող գործառույթը: Ընտանեկան կոնֆլիկտները մեծամասամբ լինում են հենց ընտանիքի անդամների արժեքային սկզբունքների տարբերությունների պատճառով, մյուս կողմից՝ արժեքային կողմնորոշումները իրենց բնույթով դինամիկ են, և հաճախ նրանց առաջնայնությունը պայմանավորված է լինում տարիքային առանձնահատկություններով և նախընտրություններով: Սա ընտանեկան կյանքի այն ոլորտն է, որտեղ արտահայտվում են սերնդային կոնֆլիկտները, որոնք կրում են անհրաժեշտ սոցիալական բնույթ:

Ընտանեկան իդեալականացված կյանքը կամ ճգնաժամային ընտանիքը ծնողների կերպարի հետ նույնականացմամբ հիմնավորելու միտումները բերում են նրան, որ երիտասարդ ամուսինները կարող են գնահատվել որպես ինֆանտիլ էակներ, ովքեր չունեն սեփական դիրքորոշումներ ու ամբողջովին զուրկ են կամքից և պատասխանատվությունից: «Միթե մենք իրականում երեխաներ ենք, ովքեր սեփական նևրոզների և ագրեսիայի համար պատասխանատու չեն: Քանզի այս տրամաբանությանը հետևելով, պետք է անձի բոլոր բացասական հատկությունները վերագրենք նրա ծնողներին»: Հոգեբանական մոտեցումների անհասությունը

ընտանեկան ճգնաժամերի վերաբերյալ, երիտասարդ ընտանիքների ծնողական ընտանիքների հետ նույնականացման հետևանքով առաջացող կոնֆլիկտների բացատրությունն ամբողջովին արտացոլում է կաուզիալ, պատճառահետևանքային գիտական սկզբունքը: Բայց հարցը այն է, որ հոգեկանի առումով այս սկզբունքը չի կարող արդյունավետ կերպով գործել: «Ոչ ոք «պայմանավորված չէ» սեփական ծնողներով: Հոգին անկախ է և գոյություն ունի պատճառահետևանքային օրենքներից դուրս: Այո՛, ծնողներից և շրջապատող այլ անձանցից մեզ բաժին են հասնում բազմաթիվ արատներ և բարիքներ, սակայն նրանցից մենք «ընտրում ենք» միայն նրանք, որոնց նկատմամբ ունենք հակվածություն: Ամեն ինչում մեղադրել հորը կամ մորը անիմաստ է»:

Ընտանիքի էտալոնը իհարկե ոչ կոնֆլիկտային ընտանիքն է, երջանիկ ամուսնական զույգը և ոչ պակաս երջանիկ երեխաները: Հասարակությունում գոյություն ունեցող էտալոնը ձգում է երիտասարդ ընտանիքներին, պարտավորեցնում նրանց հետևել համընդհանուր ընդունված պատկերացումներին: Ամուսնությունը բավականին հակասական ինստիտուտ է, որտեղ անպայման պետք է իրենց տեղն ունենան ճգնաժամները: Նորմատիվ ճգնաժամները ամուսնական հարաբերությունների անբաժանելի մասն են:

Ընտանեկան ճգնաժամները չեն կարող մեկնաբանվել միայն դերերի տեսության սահմաններում: Անհրաժեշտ է հաշվի առնել ընտանեկան հարաբերությունների ներքին հոգեբանական դինամիկան: Յուրաքանչյուր ամուսնական կոնֆլիկտի դեպքում պետք է ելնել ոչ միայն միջանձնային հարաբերությունների յուրահատկություններից, այլև անգիտակցական մոտիվացիայի տեսանկյունից: Ամուսնություն մուտք գործելը ոչ միշտ է պարզ և հասկանալի կերպով գիտակցվում երիտասարդ մարդկանց կողմից, այս մոտիվացիայի մեջ որպես կանոն տեսադաշտից միշտ դուրս են մնում անգիտակցական դիրքորոշումները: Ընտանեկան կոնֆլիկտների և ճգնաժամների հենց այս կողմն է մատնանշում Կ. Յունգը: Ամուսնության մեջ ամենից կարևորը հոգեբանական փոխհարաբերությունների առկայությունն է: Եվ հենց այս փոխհարաբերությունները հաճախ չեն ձևավորվում կամ չեն գիտակցվում: Ընտանեկան ճգնաժամերի մեկնաբանության մեջ կարևոր է դառնում ամուսինների անգիտակցական մոտիվացիայի, ամուսնական զուգընկերոջ ընտրության մոտիվացիայի պարզաբանումը: Իհարկե, ամուսնացող ամեն ոք ունակ է հիմնավորել իր ընտրությունը:

Որպես կանոն՝ այս հիմնավորումներն ունեն բացառապես հուզական կամ ավելի ճիշտ ինտիմ բնույթ: Իսկ դա արդեն նշանակում է, որ ամուսնանալու

մոտիվացիան չի գիտակցվում երիտասարդ մարդկանց կողմից: Կամ եթե այս հարցն այլ կերպ դիտարկենք, թե որքանով է ազատ ամուսնական զուգընկերոջ ընտրությունը. «որքան մեծ է անգիտակցականի ոլորտը, այդքան ավելի քիչ կարող է խոսք գնալ զուգընկերոջ ազատ ընտրության մասին՝ սիրահարվածության շրջանում դա սուբյեկտիվորեն հիշեցնում է իր մասին, ինչպես հստակ ընկալվող ճակատագրի անխուսափելիությունը: Այնտեղ, որտեղ սիրահարվածություն չկա, այսպիսի «անխուսափելիությունը» այնուամենայնիվ կարող է գոյություն ունենալ, բայց իհարկե, ավելի քիչ հաճելի ձևով»: Ընտանեկան հոգեբանության համար ավանդական են համարվում ամուսնական կոնֆլիկտների մոդելները, որպես սեփական ընտանիք՝ ծնողական մոդելների տեղափոխությամբ: Ընտանեկան հոգեբանության մեջ հաճախ հանդիպում է ամուսնական կոնֆլիկտների խնդրին հենց այս մոտեցումը: Էությունը բավականին պարզ է. տղամարդն ու կինն ամուսնանալով իրականացնում են այն դերերը, որոնց հետ իրենք նույնականացվել են հայրական ընտանիքում: Սակայն անկախ այն բանից, որ ծնողական դերերի մոդելների համատեքստը չունի թերություններ, այս համատեքստում շրջանցում են ծնողական կերպարների հետ նույնականացման անգիտակցական տեսակետները: «Անգիտակցական մոտիվացիաները կարող են ունենալ ինչպես անհատական, այնպես էլ ընդհանուր բնույթ:

Ամենից առաջ նրանց թվին են դասվում ծնողների ազդեցությունից առաջացած շարժառիթները: Երիտասարդի փոխհարաբերությունները մոր հետ և աղջկա փոխհարաբերությունները հոր հետ հանդիսանում են գերակայող գործոններ: Հենց ծնողի հետ կապի ամրությունն է անգիտակցաբար ազդում ամուսնու կամ կնոջ ընտրության վրա՝ կամ դրական կամ բացասական կերպով: Ծնողներից մեկի նկատմամբ գիտակցված սերն է նպաստում նրա նմանությամբ ամուսնական զուգընկերոջ ընտրությանը: Այն դեպքում, երբ չգիտակցված կապը (որն ընդհանրապես պարտավոր չէ հանդես գալ գիտակցված սիրո տեսքով) բարդացնում է ընտրությունը և պարտադրում է բնորոշ ուղղումներ»:

Ծնողների հետ զուգընկերոջ դերի նույնականացման գործընթացն ունի երկկողմ բնույթ. ոչ միայն երեխան է իրեն նույնականացնում ծնողական կերպարի հետ, այլև ծնողն ինքը գիտակցված, հաճախ նաև չգիտակցված ուղղորդում է նույնականացման այս գործընթացը: «Ընդհանուր առմամբ ամբողջ այն կյանքը, որը ծնողները կարող էին ապրել, բայց չեն ապրել, քանզի հետևում էին անհատական մոտիվներին, փոխանցվում է նրանց երեխաներին: Այլ կերպ ասած, երեխաները կարծես ստիպված են շարժվել այն ուղղությամբ, որը փոխհատուցում է այն ամենը, ինչը նրանց ծնողների կյանքում մնացել է չիրագործված»: Կարելի է ենթադրել, որ

այն ընտանիքները, որտեղ ամուսինների միջև կոնֆլիկտներն ունեն իրենց մշտական տեղը, որպես կանոն կառուցված են ավանդական պատկերացումներին համապատասխան:[5]

Այսպիսի ընտանիքների տարբերակիչ յուրահատկությունն է ամուսինների միջև հոգեբանական փոխհարաբերությունների պակասը: Տղամարդու, ինչպես նաև կնոջ անգիտակցականում գոյություն ունի ամուսնական զուգընկերոջ իդեալական կերպար: Այս կատարյալ կերպարը ծրագրավորում է տղամարդուն և կնոջը, ուղղորդում է ինտիմ հետաքրքրությունները, դառնում ուղղորդող աստղ: Այս կատարյալ տիպը ընդհանուր առմամբ իրենից ներկայացնում է ինչ-որ ֆիլոգենետիկ իրականություն, ինչ-որ հնագույն կերպար, սակայն այն ինչ-որ կոնկրետ կնոջ կամ տղամարդու կերպար չէ, այլ՝ արքետիպ: «Յուրաքանչյուր տղամարդ հնուց ի վեր իր մեջ կրում է կնոջ կերպար, այդուհանդերձ ոչ թե կոնկրետ այս նշանածի, այլ ինչ-որ նշանած կնոջ ընդհանրապես: Այս կերպարն ըստ էության անգիտակցական է, իրենից ներկայացնում է ժառանգական զանգված, որը սկիզբ է առնում դեռևս հնագույն ժամանակներից և պատկերված է կենդանի համակարգում. «տիպ» (արքետիպ) կնոջ վերաբերյալ նախնիների ամբողջ փորձը, կանացիության վերաբերյալ բոլոր նկարագրությունների հիմքը, որոնք ժառանգաբար փոխանցվում են հարմարման հոգեբանական համակարգ: Նույնիսկ եթե ոչ մի կին գոյություն չունենա, այնուամենայնիվ այդ անգիտակցական կերպարներից ելնելով հնարավոր է մատնանշել, թե հոգեկան հարաբերություններում ինչպիսի հատկություններով պետք է օժտված լինի նա: Սա ճիշտ է նաև կանանց համար, նրանք նույնպես ի ծնե ունեն տղամարդու կերպար»:

Հաշվի առնելով այն, որ այս կերպարներն ամբողջովին անգիտակցական են, ապա տրամաբանական է ենթադրել, որ ամուսնական զուգընկերոջ ընտրության հիմքում ընկած է հենց այդ արքետիպը: Անգիտակցականը, համաձայն հոգեդինամիկայի պարադիգմայի, միշտ պրոյեկտվում է: Համաձայն Ջոն Ա. Սանֆորդի՝ տղամարդու անձն ունի կանացիություն, կնոջ անձն ունի տղամարդկայնություն: Տղամարդն ու կինը ոգի և հոգի են, Անիմա և Անիմուս՝ այն է, ինչը ուղղորդում և ոգեշնչում է կնոջն ու տղամարդուն: Հոգեդինամիկ տեսանկյան սահմաններում ընտանեկան կոնֆլիկտների և ճգնաժամերի դիտարկման խնդիրներում առաջին պլան է դուրս գալիս արքետիպային կերպարներով պայմանավորված զույգերի միմյանց համապատասխանության կամ անհամապատասխանության հարցը:

[5] Юнг К. Г., Брак как психологическое отношение. В кн. Райгородский Д. Я. Психология и психоанализ любви. Самара: Издательский Дом БАХРАХ-М. 2002.էջ 456

Այն, ինչը սոցիալական հոգեբանության մեջ դիտարկվում է «նախանշված դերերի և ակնկալվող վարքի» սահմաններում, ընկած է արքետիպային իրականության հիմքում: Ծնողական դերերի հետ նույնականացման դասական կոնցեպցիան արդեն իսկ առկա է Ա. Ադլերի շարադրած համատեքստում. «Բոլոր կարողությունները, անկարողությունները, սիրելու և ամուսնության հակվածությունները դրված են նախատիպում, որոնք ձևավորվում են կյանքի առաջին տարիներին: Նախատիպի հատկությունները դիտարկելով հնարավոր է մատնանշել այն բարդությունները, որոնք ծագում են հասուն մարդու հետագա կյանքում»:

Բարեկեցությունն ընտանիքում Ադլերը դիտարկում էր սոցիալական հետաքրքրության իր կոնցեպցիայի տեսանկյունից: Սոցիալական հետաքրքրությունն իրենից ներկայացնում է անձի ինչ-որ դրական հատկություն, որի շնորհիվ նա կարողանում է մտնել այլ կերպարի մեջ և ապրումակցել: Համաձայն Ադլերի՝ եթե մարդու մոտ փոքր տարիքից դաստիարակության շնորհիվ ձևավորվում է սոցիալական հետաքրքրություն, ապա նրա ամուսնական կյանքին կոնֆլիկտները վտանգ չեն սպառնում: Սոցիալական հետաքրքրությունը կամ ամբողջականության զգացումն ապահովում է ամուսինների փոխըմբռնումը: Այդ իսկ պատճառով երջանիկ ընտանիքը հիմնված է հավասարության սկզբունքի վրա: «Ինքն իրենով սերը բավականին անորոշ զգացմունք է: Այդ իսկ պատճառով սիրո պատմություններն այդքան տարբեր են: Եթե միայն հարաբերությունները ստեղծվում են հավասարության սկզբունքով, սերն ընդունում է ճիշտ ձև և դարձնում ամուսնությունը հաջողված»: [6]

Ամուսնությունը չի հանդիսանում մի ոլորտ, որտեղ առաջնայնության համար պայքար է մղվում: Այսպիսի մոտեցման դեպքում ամուսնությունն ուղղակի չի կարող ամբողջական բնույթ ունենալ: Ադլերը նշում էր, որ չի կարելի հաղթող դառնալ այնպիսի իրավիճակում, որտեղ մրցակցության և պայքարի համար տեղ չկա: «Մանրամասն ուսումնասիրելով կարելի է հայտնաբերել, որ իրականում շատերը զուգընկեր ընտրելիս փնտրում են զոհի, չհասկանալով, որ ամուսնական հարաբերությունները չեն կարող օգտագործվել նմանատիպ նպատակներում: Եվ եթե ամուսիններից մեկը ձգտում է հաղթող լինել, երկրորդին նույնպես սկսում է պատել նմանատիպ ցանկություն: Արդյունքում՝ համատեղ կյանքը դառնում է անհնար»:

[6] Адлер. А., Любовь и брак. В кн. Райгородский Д.Я. Психология и психоанализ любви. Самара: Издательский Дом БАХРАХ-М. 2002., էջ 619

Իրական ամուսնական հարաբերությունները կառուցվում են ամուսնական զուգընկերոջ ունեցած հետաքրքրությունները կիսելու հիմքի վրա: Ընտանեկան կոնֆլիկտների հնարավոր պատճառների վերաբերյալ Ադլերի մտքերը հանդիսանում են ընդհանուր հոգեվերլուծական պարադիգմայի սոցիալական կողմի զարգացումը: Եթե Կ. Յունգի վերլուծական հոգեբանության տեսանկյունից կատարյալ կնոջ և տղամարդու կերպարները թելադրվում են արքետիպային յուրահատկությամբ, ապա Ա. Ադլերը խոսում է ամուսնական զուգընկերոջ ընտրության գործընթացում ծնողական կերպարների հստակ ազդեցության մասին: Ընտանեկան կոնֆլիկտների ձևավորման տիպիկ օրինակ է հանդիսանում իշխող կնոջ և թույլ ամուսնու առկայությունը, ում դեռևս փոքր տարիքից ճնշել է մայրը: Ամուսնական կոնֆլիկտների հոգեբանական պատճառները համաձայն Ա. Ադլերի՝ ամուսիններից մեկի կամ երկուսի մոտ առկա անլիարժեքության զգացումն է: Այսպիսի իրավիճակում ամուսիններից յուրաքանչյուրը փորձում է կայանալ մյուսի հաշվին՝ ճնշելով նրան: Այն ամուսնության մեջ, որտեղ ամուսինները տառապում են անլիարժեքության բարդույթով, փորձում են ազատվել դրանից նույնիսկ սեքսուալ հարաբերությունների ոլորտում: Անլիարժեքության բարդույթը ծրագրավորում է կնոջ կամ ամուսնու ընտրության գործընթացը:

Որպես կանոն, այսպիսի իրավիճակում կինը կամ տղամարդը փնտրում է ոչ թե ամուսնական զուգընկերոջ, այլ զոհի: «Բավարարման բարդույթի գաղափարը կարող է բացատրել զուգընկերոջ ընտրության այնպիսի յուրահատկություններ, որոնք այլ կերպ հնարավոր չէ բացատրել: Պարզ է դառնում, թե ինչու են ոմանք ընտրում թույլ, հիվանդ կամ ծեր կյանքի ընկերների: Նրանք հավատում են, որ այսպիսի ընտրությունն իրենց կյանքն ավելի լավը կդարձնի»:

Եզրակացություն

Այսպիսով, Ադլերի հիմնական գաղափարն այն է, որ կոնֆլիկտներն ու ճգնաժամային իրավիճակներն ընտանեկան կյանքում ծագում են ամուսինների անլիարժեքության զգացումից: Սակայն էությունը միայն այն չէ, որ ճգնաժամերն ընտանիքում և հետագայում ծագող կոնֆլիկտները պայմանավորված են անլիարժեքության բարդույթով: Հաճախ հենց անլիարժեքության բարդույթն է դառնում շարժիչ մոտիվ ամուսնանալու համար: Այսինքն՝ ամուսնությունն ինքնին դիտարկվում կամ ավելի ճիշտ անգիտակցաբար ընկալվում է որպես այդ բարդույթից ազատվելու հնարավորություն:

Մյուս կողմից, նևրոտիկ ամուսնությունները (տերմինն առաջարկվել է հոգեվերլուծության կողմից) ամուսինների միջև հանդիսանում է դեստրուկտիվ/ապակառուցողական/ և բացասական հույզերի ցուցադրման դաշտ: Դասական անլիարժեքությունից ազատվելու միջոց է դառնում ատելության օբյեկտի որոնումը: Եվ որպես կանոն, այդ օբյեկտն է դառնում ամուսնական զուգընկերը: Ընտանիքում ամուսինների միջև առկա կոնֆլիկտները սոցիալական ասպեկտում շրջապատողների համար ամբողջովին հասկանալի են: Ադլերի անհատական հոգեբանության մեջ մենք տեսնում ենք ամուսնական կոնֆլիկտների վերաբերյալ բավականին ընդունելի մեկնաբանություններ:

Մասնավորապես, գիտական հետաքրքրություն է ներկայացնում այն դրույթը, ըստ որի՝ ամուսնության մեջ զույգերի կողմից նևրոտիկ դրսևորումը խոսում է զուգընկերոջ նկատմամբ վրեժխնդրության մասին: Ի սկզբանե ամուսնության նևրոտիկ մոտիվացիայի հիմքը «չգիտակցված՝ վրեժխնդրությունն է: Այսպիսի իրավիճակն ամբողջովին պայմանավորված է անլիարժեքության զգացումով և դրանից ձերբազատման ցանկությամբ՝ ամուսնական զուգընկերոջը ստորացնելու միջոցով:Արդյունքում՝ խաթարվում է ընտանիքի հոգեբանությունը,և դժբախտաբար նմանատիպ բազմաթիվ դեպքեր մուտք են գործում հենց դպրոց՝ բռնության, ճնշումների ձևով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Адлер. А., Любовь и брак. В кн. Райгородский Д.Я. Психология и психоанализ любви. Самара: Издательский Дом БАХРАХ-М. 2002., էջ 619
2. Дружинин В. Н., Психология семьи. Екатеринбург: Деловая книга, 2000, էջ 22
3. Жедунова Л. Г., Можаровская И. А., Посысоев Н. Н., Юрасова Е. Н., Основы псхологии семьи и семейного консультирования. Изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2004.
4. Шибутани. Чувства и роли. В книге: Райгородский Д.Я. Психология и психоанализ любви. Самара: Издательский Дом БАХРАХ-М. 2000.
5. Юнг К. Г., Брак как психологическое отношение. В кн. Райгородский Д. Я. Психология и психоанализ любви. Самара: Издательский Дом БАХРАХ-М. 2002.էջ 456
6. Hicks M.W. Platt L.M., Marital happiness and stability: A review of the research in the sixties //A Desade of Family Research and Action, 1960-69. Ed. by C.B.Broderick. Minneapolis, 1971, p. 59-78. KoftaM.Samokontrolaiemocje-Warszawa:PWN. 1979.-376s. Lewis R.A., Spanier, G.B. Theorizing about the quality and stability of marriage // Contemporary theories about the Family/Ed, by W.R. Burr and others.-vol.l, New Yoric, 1979. P. 268-294.